

Մ. ՕՍԿԵՇՈՏՏ Օ ՄԱՍՏԱՅ ՄԱՍՏԱՅԻՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱ

Ա. Ա. Կալաշյան

Работа посвящена анализу понятия "массовый человек" в интерпретации М. Оукешотта.

Полагая, что мир политики зависит от сферы субъективного, М. Оукешотт проблему "массового человека" рассматривает в данном контексте. На основе анализа развития европейской истории он приходит к выводу, что "массовый человек" - "воинствующий антииндивид", "новый тип личности", который отличается слабой индивидуальностью, моральной неадекватностью, готовностью подчиняться и "позволяет другим быть лишь повторением самого себя". А массы этих "антииндивидов" характеризуются "единой моральной ситуацией (моралью взаимной солидарности), т.к. они не "сталкиваются с ситуацией личного выбора".

М. Оукешотт утверждает, что "мир массового человека" пошатнулся, но не разрушил моральный престиж индивидуальности. Во всех важнейших проявлениях независимый индивид продолжает оставаться реальностью, а "массовый человек" является лишь тенью индивидуальности.

M. OUKESHOTT ON THE MASS OF REPRESENTATIVE DEMOCRACY

A. A. Kalashyan

Assuming that the world of politics depends on the scope of the subjective, M. Oukeshott is considering the problem of "mass man" in this context. Based on the analysis of European history, he concludes that "mass man" "militant antiindividual", "a new type of personality", which is characterized by a weak personality, moral inadequacy, willingness to obey and "allows others to be merely a repetition of himself/herself". A mass of these "antiindividuals" is characterized by "a single moral situation (morality of mutual solidarity)" because they are not "facing a situation of personal choice".

M. Oukeshott also argues that "the world of mass man" is shaken, but did not destroy the moral prestige of the individual. In all important manifestations the independent individual continues to remain the reality, the "mass man" is a mere shadow of the latter.

Ռ. Ա. ԴԱԼԸ ՊՈԼԻԱՐԽԻԱՅԻ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԶՄԱԿԱՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ա. Ա. ՔԱԼԱՇՅԱՆ

*Քաղաքական գիտությունների թեկնածու,
ՀՀ Սփյուռքի նախարարության գլխավոր մասնագետ*

Ժողովրդավարության և ժողովրդավարական քաղաքական համակարգերի հետ կապված հիմնահարցերն առաջնակարգ տեղ են գրավել XX դարի քաղաքագիտության տեսության շրջանակներում: Այդ ոլորտում ուրույն տեղ է հատկացվել պոլիարխիայի¹ հայեցակարգի համակողմանի հիմնավորմանը, ինչն էլ

¹ Պոլիարխիա (հուն.՝ poli բազմաթիվ և arche կառավարում, իշխանություն) եզրով բնու-

դարձել է արդի քաղաքական փոփոխության դասականներից մեկի՝ ամերիկյան քաղաքագիտական մտքի սկանալոր ներկայացուցիչ Ռ. Ա. Դալի տեսական հետաքրքրությունների ուրույն բնագավառներից մեկը: Քաղաքական պրակտիկայի համակողմանի և ընդհանրացված վերլուծության հիման վրա 1950-ականներին նրա կողմից առաջադրվել է պոլիարխիայի և քաղաքական բազմակարծության ամփոփ հայեցակարգ, որում ժողովրդավարության «իդեալական մոդելի» և «իրական ժողովրդավարության» տարբերությունների գիտատեսական վերլուծությամբ արժևորման է ենթարկվում ներկայացուցչության դերը քաղաքական մասնակցության և իշխանության համար մղվող քաղաքական պայքարում:

Փաստական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ քաղաքական կյանքի ժողովրդավարացման գործընթացների համատեքստում պոլիարխիայի էությունը բացահայտելու միտումով Ռ. Դալն առաջին հերթին անդրադառնում է քաղաքական տարածության մեջ ժողովրդավարության պատմական տեղաշարժերի և վերջիններիս հետևանքով հասարակական-քաղաքական կյանքում տեղ գտած որակական փոփոխությունների քննական արժևորմանը: Վերլուծական ելակետ ընդունելով **քաղաք-պետությունից ազգ-պետության անցման տարածական փոփոխությունների դինամիկան**² տեսաբանը փաստում է այն իրողությունը, որ այդ գործընթացի հետևանքով քաղաքական կյանքում արմատավորված ժողովրդավարական տեղաշարժերը հանգեցնում են ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր հետևությունների: Պոլիարխիայի էությունը բացահայտելու և մեկնաբանելու միտումով քաղաքագետը գրում է. «Քաղաք-պետության ուսումնասիրությունը, որն ավելի քան երկու հազարամյակ համարվում էր ժողովրդավարական կարգի բնական և անգամ բացառիկ կառույց, տեսակետ, որը շարունակում էր պաշտպանել դեռևս Ռուսոն «Հասարակական դաշինքի» (1762) մեջ, տասնութերորդ դարի վերջերին գրեթե ամենուր դուրս մղվեց ազգ-պետության ուսումնասիրությունների կողմից, իսկ ժողովրդավարական ջանքերը, պատկերացումներն ու գաղափարախոսությունը իրենց ծանրության կենտրոնը հարկադրված տեղափոխեցին ազգ-պետության կառավարումը ժողովրդավարացնելու հիմնահարցի ուղղությամբ»²:

Ռ. Դալը նաև մատնանշում է, որ «հասարակական դաշինքի» սահմանափակող ըմբռնմանը փոխարինելու եկած պոլիարխիան պետք է բնութագրել ժողովրդավարացման գործընթացների, ավելի ճիշտ՝ ժողովրդավարական ինստիտուտների ձևավորման և գործառնության համատեքստում, երևույթ, որի առանձնահատկությունները, նրա համոզմամբ, պատշաճ ուշադրության չեն արժանացել: Այնինչ, ըստ քաղաքագետի, նշված անցումը բովանդակում է քաղաքական մասնակցության, քաղաքական մրցակցության և ընդհանրապես հասա-

թագրվում է քաղաքական այն վարչակարգը, որն օժտված է քաղաքական մրցակցության և քաղաքական մասնակցության բարձր աստիճանով: Ռ. Դալի հայեցակարգում «պոլիարխիա» եզրը կիրառվում է ժողովրդավարության իդեալական մոդելի և իրական ժողովրդավարության տարբերությունները բացահայտելու, ինչպես նաև մոնիստական-միապետական վարչակարգերին հակադրելու համար:

² **Даль А. Р.** Полиархия, плюрализм и пространство / Антология мировой политической мысли. В 5-и томах. Т. II, М., 1997, с. 612.

րակական ու քաղաքական կյանքի համար կարևորագույն նշանակություն ունեցող մի շարք հետևանքներ: Գիտնականը համոզված է, որ այդ ճանապարհով է «հասարակական դաշինքից» անցում կատարվում ժողովրդավարության, որի նախնական տիպ նա համարում է **մոնիստական պոլիսային ժողովրդավարությանը փոխարինելու եկած պոլիարխիան**: «Պոլիարխիան կարելի է դիտարկել նաև որպես վարչակարգի տեսակ, պարզաբանում է քաղաքագետը, որը հարմարեցված է ազգ-պետությունների կառավարման համար, որոնցում հասարակական գործերից վեր կանգնած իշխանությունը և հեղինակությունը բաշխված են բազմակարծության՝ կազմակերպությունների և ասոցիացիաների բազմության միջև, որոնք բավականին ինքնավար են ոչ միայն մեկը մյուսի, այլև, բազմաթիվ դեպքերում, պետության կառավարչական գործունեության նկատմամբ»³:

Այդ ամենից հետևում է, որ Ռ. Դալը պոլիարխիայի կայացման և գործառնության առանձնահատկությունների վերլուծությունը սերտորեն շաղկապում է մոնիստական քաղաք-պետության ժողովրդավարությունից բազմակարծության վրա հենված ազգ-պետության ժողովրդավարությանն անցման գործընթացների հետ: Այդ դիրքերից նա առաջին հերթին առանձնացնում է պոլիարխիայի էությունը բնութագրող հետևյալ առանձնահատկությունները՝ **ներկայացուցչության ապահովում**. քաղաքացիների կամ թեկուզ դրանց մեծ մասի ներկայացուցչության մեջ միավորվելու, այսինքն՝ միջնորդավորված իշխանություն իրականացնելու գործընթացը հանդես եկավ որպես քաղաքական համակարգի տարածական ընդարձակման անխուսափելի հետևանք; **քաղաքական տարածության ընդարձակում**, երբ հասարակական-քաղաքական կյանքում սկսեց արմատավորվել ներկայացուցչական ժողովրդավարությունը, և վերջինիս ծավալմանը զուգընթաց ժողովրդավարացման գործընթացներն արգելակող խոչնդոտներն աստիճանաբար ոչնչացվում են, որին համապատասխան՝ ներկայացուցչական ժողովրդավարությունը քայլ առ քայլ ընդարձակում է իր գործառնական սահմանները; **մասնակցության սահմանների ընդլայնում**. անցման շրջանի ժողովրդավարությանը բնորոշ քաղաքական մասնակցության որոշ ձևեր օբյեկտիվորեն հանդես են գալիս սահմանափակ տեսքով, ինչը բացատրվում է «տարածական արգելքներով», որոնք «հաղորդակցական խզումների» պատճառ են դառնում; **քաղաքական բազմազանության հաստատում**. քաղաքական իրավունքների և ազատությունների ներդրումը, ինչպես նաև քաղաքական կյանքի ժողովրդավարացումն օբյեկտիվորեն ծնում են քաղաքական գործունեության բազմազանություն: Քաղաքական պրակտիկան ցույց է տալիս, որ պոլիսային սահմանափակ ժողովրդավարությանը փոխարինած պոլիարխիայի պայմաններում քաղաքական միությունը ընդարձակում է սահմանները, իսկ քաղաքական կյանքը դառնում է առավել բազմազան; **կոնֆլիկտային իրավիճակների հաղթահարում**. պոլիսային ժողովրդավարությունից պոլիարխիայի անցումն անխուսափելիորեն ուղեկցվում է քաղաքական շերտավորմամբ, որի հետևանքով քաղաքական կյանքի անբաժան մաս է դառնում նաև քաղաքական կոնֆլիկտը: Դրա հիման վրա Ռ. Դալը պնդում է, որ քաղաքագիտական միտքն ու քաղաքա-

³ Նույն տեղում, էջ 626:

կան պրակտիկական կոնֆլիկտը դիտարկում են որպես նորմալ երևույթ և ոչ թե շեղում: Առավել ևս, որ շահերի կոնֆլիկտը պայմանավորված է նաև հասարակական և մարդկային գործոններով, իսկ դրանից տրամաբանորեն բխում է, որ շահերի ճնշումն անհնար է առանց ազատությունների ճնշման: Դա է նաև պատճառը, որ կոնֆլիկտների լուծման արդյունավետ եղանակ է համարվում քաղաքական տարածության ընդարձակումը: Եվ, վերջապես, ժողովրդավարական տեղաշարժերի և քաղաքացիությունից ազգ-պետության անցման տարածական փոփոխությունների հետևանքով հաստատված պոլիարխիայի վեցերորդ բնութագրական գիծ է համարվում **փոքր տարածության ժողովրդավարությունից խոշորամասշտաբ ժողովրդավարության անցումը**, իսկ պոլիարխիայի վերջին՝ յոթերորդ հետևանք՝ ժողովրդավարությանը բնորոշ **կազմակերպված բազմակարծության** հաստատումը⁴:

Անդրադառնալով «պոլիարխիա» եզրի ստուգաբանությանը՝ Ռ. Դալը նշում է, որ այն 1950-ականներին շրջանառության մեջ դրվելով՝ որոշակի նախնական իմաստ չի ունեցել: Արժեքային այդ մոտեցումը հավանաբար պատճառաբանվում է նրանով, որ նախորդների կողմից «պոլիարխիան» դիտարկվել է հակադրության մեջ, որպես պոլիսային ժողովրդավարությանը և միապետությանը հակադիր **քաղաքական ավարտուն ակտ**⁵: Ահա թե ինչու Ռ. Դալը, «պոլիարխիա» էությունը քննարկելով գործընթացային ամբողջության մեջ, ձգտում է այդ ոլորտում բացահայտել և համակարգված ներկայացնել քաղաքական այդ երևույթի բովանդակությունը բնութագրող հիմնական որակները: Քաղաքական կյանքը դիտարկելով իր գործընթացային ամբողջության մեջ՝ քաղաքագետը ձգտում է պոլիարխիայի էությունը բացահայտել ժողովրդավարական «հասարակական-քաղաքական գործընթացները բնութագրող հիմնարար 4 գործոնների» հետ ունեցած սերտ կապի մեջ: Քաղաքական կյանքում շեշտադրելով ներկայացուցչության ու մասնակցության դերը՝ Ռ. Դալը պնդում է, որ բովանդակային առումով նշված գործոնների էությունը կարելի է արտահայտել հետևյալ կերպ. «*մրցանակային համակարգ* կամ առաջնորդների վերահսկողություն և վերահսկողություն առաջնորդների կողմից, *աստիճանակարգություն* կամ վերահսկողություն առաջնորդների կողմից, *պոլիարխիա* կամ առաջնորդների վերահսկողություն և *գործարք* կամ վերահսկողություն առաջնորդների միջև, այսինքն առաջնորդների կողմից մեկը մյուսի վերահսկողություն»⁶: Բավականին հետաքրքրական է նաև վերլուծաբանի պարզաբանող այն տեսակետը, որ «վերահսկողության բարձր աստիճան» հասկացությունը պետք է ըմբռնել «օպերացիոնալ նշանակությամբ», որը նա տեսականորեն մեկնաբանում է որպես ազ-

⁴ Այդ ամենի մանրամասները տե՛ս նույն տեղում, էջ 612-614:

⁵ Այդ եզրակացությունը կարելի է փաստել քաղաքագետի կողմից մեջբերված օրինակով: Նա մասնավորապես գրում է, որ 1909 թ. հեղինակավոր օբսերվոյան բառարանում «**պոլիարխիա**» եզրը սահմանված է հետևյալ կերպ. «ի հակադրություն **միապետության**՝ պետության կամ քաղաքի կառավարման ձև շատերի կողմից»: Ռ. Դալը նաև գրում է, որ «պոլիարխիա» եզրի նման ըմբռնումը թեև քաղաքագիտության տեսության մեջ չի շրջանառվում, բայց իմաստային նշանակությամբ լիովին բավարարում է սեփական հայեցակարգի պահանջմունքներին, տե՛ս նույն տեղում, էջ 614:

⁶ Նույն տեղում, էջ 614:

գաբնակչության մեծամասնության կողմից ընտրություններին մասնակցելու, կամ տարբեր թեկնածուների միջև ընտրություն կատարելու, ընտրական գործընթացներում ուղղորդված աջակցության, այս կամ այն թեկնածուի կամ շահերի խմբի առավելություններից և թերություններից անկախ ընտրելու իրավունքի իրականացում: Սակայն Ռ. Դալը նաև հավելում է, որ պոլիարխիայի գործընթացային վերլուծությունը հանգեցնում է այն հետևության, որ վերը նշված մոտեցումը սակավ արդյունավետ է, քան քաղաքական ինստիտուտների գործընթացային ուղղվածությունը:

Տեսաբանը միաժամանակ պնդում է, որ թեև անցման փուլում «ժողովրդավարության նպատակները դեռևս հեղիեղուկ են և բավականին մոտավոր», սակայն այդուհանդերձ այդ «անավարտ» ժողովրդավարությունը ևս պետք է արժևորել այն իմաստով, որ այս փուլում հարաբերական ուժեղ վերահսկողություն է իրականացվում առաջնորդների նկատմամբ: Այդ հենքի վրա էլ կառուցվում է պոլիարխիայի էությունը բացահայտող Ռ. Դալի մեկ այլ սահմանում, համաձայն որի «... պոլիարխիա ենք անվանում հասարակական գործընթացների այն համակարգը, որը դա (վերահսկողությունը՝ Ա. Ք.) հնարավոր է դարձնում»⁷:

Ավելի քան ակնհայտ է, որ քաղաքագետը «պոլիարխիա» հասկացության բովանդակությունը բացահայտում և ստուգաբանում է ժողովրդավարության հետ ունեցած անբաժնելի կապի մեջ: Եվ դա է պատճառը, որ «պոլիարխիա»-«ժողովրդավարություն» զուգորդությամբ նա քաղաքագիտության տեսության շրջանակներ է ներմուծում «պոլիարխիայի» միանգամայն նոր ըմբռնում և քննարկվող երևույթի էությունը բացատրում է գործնական (իրական) ժողովրդավարության և ժողովրդավարական իդեալի (մոդելի) միջև առկա տարբերությունների հիման վրա: Նա նաև պնդում է, որ տեսության և քաղաքական պրակտիկայի շրջանակներում «ժողովրդավարություն» հասկացությունը կիրառվում է երկակի և ինչպես ինքն է մատնանշում՝ երբեմն շփոթվող ըմբռնումներով: Վերլուծաբանը դա համարում է հասարակական-քաղաքական փոփոխությունների և վերջիններիս տեսական ընդհանրացման պրակտիկայի անհամապատասխանության արդյունք, որի հետևանքով մի կողմից «ժողովրդավարություն» հասկացության կիրառական սահմանները հստակորեն չեն արձանագրվում, իսկ մյուս կողմից՝ դրանով պայմանավորված «ժողովրդավարություն» եզրը գործնականում կիրառական միանշանակ ըմբռնում չունի: Եվ այդ ամենի ընդհանրացված վերլուծությամբ Ռ. Դալը գրում է, որ տեսության մեջ անգամ «ժողովրդավարություն» եզրն առնվազն երկիմաստ կիրառություն ունի, քանի որ որպես կանոն այն նախ ըմբռնվում և օգտագործվում է ժողովրդավարության «... նպատակը կամ իդեալը նկարագրելու համար, որը, հնարավոր է, անհասանելի է իրականում, մյուսն օգտագործվում է արդի աշխարհում ժողովրդավարական կամ ժողովրդավար համարվող գործող քաղաքական համակարգերի տարբեր բնութագրերը նկարագրելու համար»⁸: Քաղաքագետը նաև պնդում է, որ տեսության և պրակտիկայի տարբերություններով պայմանավորված՝ այդ երկվության իմաստը պարզաբանող «պոլիարխիա» եզրը ևս նույն գործոնների ազդեցու-

⁷ Նույն տեղում, էջ 614:

⁸ Նույն տեղում:

թյամբ կարող է դիտարկվել բազմաթիվ տեսանկյուններից: Եվ ինչպես փաստական նյութի վերլուծությունն է ցույց տալիս, տեսաբանն այդ «բազմազանության» բաժանման հիմք է համարում քաղաքական կյանքը, ավելի ճիշտ՝ քաղաքական համակարգի գործառնական հիմնարար հատկանիշները բնութագրող որակները:

Եվ գործընթացային մոտեցմամբ **Ռ. Դալը պոլիարխիան առաջին հերթին բնութագրում է որպես քաղաքական վարչակարգի տիպ:** «Պոլիարխիան ամենից առաջ կարող է դիտարկվել որպես ժամանակակից պետությունը կառավարող վարչակարգի յուրատիպ տեսակ,- գրում է նա այդ կապակցությամբ,- այնպիսի բնութագրություններով վարչակարգ, որը որոշակիորեն տարբերվում է մինչև XIX դարը գոյություն ունեցած բոլոր վարչակարգերից, ինչպես նաև ազգպետության շրջանակներում կայացած ժամանակակից վարչակարգերի մեծ մասից»⁹: Դասակարգման այս հիմքն առաջադրելով՝ գիտնականն առաջնորդվել է «պոլիարխիան» բնութագրող և ժողովրդավարությանը բնորոշ երկու որակների՝ ընդդիմության նկատմամբ հարաբերական բարձր հանդուրժողականության և կառավարության վարքագծի վրա ազդելու, ընդհուպ՝ առանձին պաշտոնական ներկայացուցիչների խաղաղ ճանապարհով փոխարինելու առավելագույն լայն հնարավորությունների համադրության սկզբունքով: Նշված գործոնների ընդհանրացնող վերլուծության դիրքերից տեսաբանը նաև փաստում է, որ «պոլիարխիան այլ վարչակարգերից որոշակիորեն կարելի է տարբերել յոթ ինստիտուտների առկայության և իրական գործառնության շնորհիվ»¹⁰: Եվ, ինչպես ցույց է տալիս փաստական նյութը, այդ յոթ ինստիտուտները բնութագրվում են «ժողովրդավարության գործնական ցուցիչների»՝ քաղաքական մրցակցության, քաղաքական մասնակցության և քաղաքական բազմակարծության համատեքստում: Այդ հիման վրա **տեսաբանը պոլիարխիայի քաղաքական ինստիտուտների թվում հիշատակում է հետևյալները.** ա) մեր օրերում լայնորեն տարածված և համապարփակ ըմբռնմանը մոտեցող ընտրական իրավունք, բ) հասարակական գործերին մասնակցելու իրավունք, գ) արդար կազմակերպված ընտրությունների անցկացում, որոնցում իսպառ բացառվում է ամեն մի բռնություն կամ հարկադրանք, դ) սեփական կարծիքն արտահայտելու՝ ներառյալ կառավարությանը, վարչակազմին, հասարակությանը, տիրապետող գաղափարախոսությանը և այլնին ազատ քննադատելու հուսալի պաշտպանություն, ե) կառավարական վերահսկողություն չունեցող այլընտրանքային, հաճախ մրցակցող տեղեկատվական աղբյուրների և համոզմունքների առկայություն, զ) ինքնավար և ամենատարբեր կազմակերպություններ, ներառյալ, ինչն առանձնապես կարևոր է, ընդդիմադիր քաղաքական կուսակցություններ հիմնադրելու ազատության բարձր աստիճան և է) ընտրողներից և ընտրության արդյունքներից կառավարության հարաբերականորեն բարձր կախվածություն¹¹:

Անդրադառնալով պոլիարխիայի ժողովրդավարական բնութագրիչների վերլուծությանը՝ «ժողովրդավարության» և «պոլիարխիայի» նույնացման տե-

⁹ Նույն տեղում, էջ 615:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Տե՛ս նույն տեղում:

սակետների մերժմամբ՝ Ռ. Դալը գրում է, որ պոլիարխիայի քաղաքական ինստիտուտները, սերտորեն կապված լինելով ժողովրդավարացման գործընթացների հետ, քաղաքական պրակտիկ կյանքում հանդես են գալիս միայն իրենց տիպական բնութագրական առանձնահատկություններով: Քաղաքագետը դրանցից առաջինը բնութագրում է **որպես ազգ-պետության ժողովրդավարացման արդյունք**: Ա. Դալի համոզմամբ պոլիարխիայի էությունը նկարագրող այս որակը պատմական իմաստավորման արդյունք է, դրա համար էլ նա քաղաքական ինստիտուտների բարեշրջման երևույթը քննարկում է պատմականության, այդ թվում նաև ազգ-պետության քաղաքական ինստիտուտները ժողովրդավարացնելու և ազատականացնելու գործընթացների տեսանկյունից: Որակական այդ առանձնահատկության համակարգված ուսումնասիրության հիման վրա վերլուծաբանը պոլիարխիան որակում է որպես «պատմականորեն պայմանավորված ինքնատիպ համալիր», որի հիմքում ընկած են XVIII դարում սկիզբ առած քաղաքական ինստիտուտների ժողովրդավարացման անշրջելի գործընթացները: Ըստ նրա՝ ճիշտ է ավանդաբար ընդունված քաղաք-պետությունների կառավարման համակարգը որպես ժողովրդավարական որակելը: Եվ, այդուհանդերձ, վերլուծաբանը այն հստակորեն տարբերում է պոլիարխիայից, քանի որ վերջինիս կառուցվածքային տարրերը աչքի են ընկնում քաղաքական մրցակցության, հետևաբար՝ քաղաքական ազատության անհամեմատ «մեծ պաշարով»: Այդ պատճառով էլ պոլիարխիայի քաղաքական ինստիտուտները շատ բանով տարբերվում են հանրապետական կառավարման քաղաք-պետությունների միմյանցից տարբերվող ժողովրդավարական կառույցներից¹²:

Այդ ամենի ընդհանրացված վերլուծությամբ՝ Ռ. Դալը պոլիարխիայի բնութագրական առանձնահատկություններից հաջորդը համարում է **ժողովրդավարացման գործընթացում ունեցած անհրաժեշտ դերը**: Քաղաքագետը դա բացատրում է նրանով, որ պոլիարխիայի հաստատումն անհրաժեշտորեն ենթադրում է քաղաքական ինստիտուտների գործառնության որոշակի ուղղվածություն, որի նպատակը «զգալիորեն մեծ քաղաքական տարածություն ունեցող ազգ-պետության շրջանակներում» ժողովրդավարացման գործընթացների արմատավորումն է և գործառնության ապահովումը: Այդ համատեքստում պոլիարխիան որակելով որպես «արդի ժողովրդավարության նախնի»՝ քաղաքագետը նաև պնդում է, որ «իբրև քաղաքական դիրքորոշում»՝ պոլիարխիան ունեցել է գործունեության համապատասխան մոտիվացիա: Անդրադառնալով նշված մոտիվների քննական արժևորմանը՝ վերլուծաբանը կարևորում է հատկապես ժողովրդավարության ցուցիչ համարվող քաղաքական մասնակցության այնպիսի ակտիվ ձևեր, ինչպիսիք են, օրինակ, ընտրական համընդհանուր իրավունքի իրագործումը, հասարակական գործերին անարգել մասնակցելու իրավունքը, ազատ և արդար ընտրությունները, քաղաքական կուսակցություններ ստեղծելու իրավունքը, խորհրդարանի կամ ընտրողների առջև գործադիր իշխանության պատասխանատվությունը և այլն: Միաժամանակ նա հավելում է, որ պոլիարխիայի ինստիտուտները թեև անհրաժեշտ, բայց ամենևին էլ բավարար պայման չեն քաղաքական մեծ տարածության մեջ ժողովրդավարական գործընթացները

¹² Տե՛ս նույն տեղում, էջ 615-616:

հիմնավորապես իրականացնելու համար: Այլ կերպ ասած՝ իր ժողովրդավար բոլոր ցուցիչներով հանդերձ՝ չի կարելի պնդել, թե ժողովրդավարացման գործընթացների «իդեալական մոդելի» արմատավորման համար պոլիարխիան լիարժեք և բավարար պայման է¹³:

Լ. Դալը վերլուծական այդ մոտեցումը հիմնավորում է նաև նրանով, որ նշված գործընթացներն անհրաժեշտաբար ենթադրում են նաև պոլիարխիայի էությունը բնութագրող ևս մեկ էական գծի համակողմանի արժևորում, որը նա սահմանում է որպես **իրավասությունների հսկողության համակարգ**: Դրանից հետևում է, որ քննարկվող քաղաքագիտական հայեցակարգում **պոլիարխիան մեկնաբանվում է որպես քաղաքական վերահսկողության այնպիսի համակարգ**, որի շրջանակներում քաղաքական ինստիտուտների գործառնական ուղղությունները, հավասարապես նաև «պետության ղեկավարման մեջ ներգրավված պաշտոնատար անձինք» ժողովրդական ընտրությունների ճանապարհով «բախվում են տեղափոխման վտանգի»: Ըստ քաղաքագետի՝ այդ վտանգով է թելադրված նաև վերջիններիս քաղաքական վարքագիծը, քանի որ քաղաքական առաջնորդները «... եթե այլ թեկնածուների, կուսակցությունների և խմբերի հետ ունեցած **մրցակցային պայքարում** ցանկանում են հաղթել ընտրություններում, հարկադրված են ձևափոխել սեփական վարքը»¹⁴: Այդ տեսանկյունից Ռ. Դալը քաղաքական ընտրախափ միջև մղվող պայքարը համարում է պոլիարխիայի առավել ակնհայտ բնութագրություններից հաջորդը: Եվ քանի որ նման մրցակցությունը մեծապես օժանդակում է ընտրախափի և քաղաքական էլիտայի փոխազդեցության բացահայտմանը, այն ոչ միայն հանդես է գալիս որպես իրական ժողովրդավարության ցուցիչ, այլև բացահայտորեն հակադրվում է քաղաքական էլիտայի միակողմանի այնպիսի տիրապետությանը, որը ձևավորվում է օլիգարխիայի երկաթյա օրենքի գործունեության արդյունքում¹⁵:

Վերը նշված հատկանիշների համադրական վերլուծությամբ՝ Ռ. Դալն անդրադառնում է նաև պոլիարխիայի բնութագրական հինգերորդ հատկանիշի լուսաբանմանը, որը սահմանում է **որպես իրավունքների համակարգ**: Նա պնդում է, որ որպես կանոն պոլիարխիան պատմականորեն հանդես է գալիս քաղաքական իրավունքների համակարգի արմատավորման արդյունքում: Ընդ որում, **իրավունքների այնպիսի համակարգի, որը երաշխավորվում և պաշտպանվում է սահմանադրորեն**: Պոլիարխիայի էությունը բնութագրող քաղաքական յոթ ինստիտուտներից յուրաքանչյուրը, ըստ նրա, ապահովում է որոշակի իրավունքների պաշտպանություն, ինչը «արդարացնում է նրա գոյությունը և գործառնությունը»: Որպես օրինակ քաղաքագետը մատնանշում է համընդհանուր ընտրական կամ կամքի ազատ դրսևորման իրավունքը: Այդ մոտեցումը նա բացատրում է նրանով, որ խոսքի ազատությունն ինստիտուտականացնելու համար քաղաքական բոլոր հարցերում քաղաքացիները պետք է օրենքով ամրագրված իրավունքներ ունենան, իսկ պետության պաշտոնատար անձանց իրավունքների պարտադիր պայմանը պետք է լինի այդ պահանջների պաշտպանու-

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 616:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 616-617:

թյունը՝ ընդհուպ մինչև խախտողներին պատասխանատվության ենթարկելը, եթե դա պահանջվում է: Եվ բանի որ քաղաքական ինստիտուտների գոյությունը պայմանավորված է ոչ թե վերացական կամ տեսական, այլ իրական և գործառնական իրավունքով, անհրաժեշտ է նաև, որ իրավունքն ամրագրվի և՛ օրենսդրություն, և՛ դատական կարգով: Չնայած արգելակող գործոնների և բարդությունների ուղղակի ազդեցությանը՝ պոլիարխիայի շրջանակներում անհրաժեշտորեն ձևավորվում է նաև օրենքներն ամրագրող օրգան, որն էլ իրականացնում է իրավունքների ամրագրման և վերահսկողության բոլոր գործառնությունները¹⁶:

Պոլիարխիայի շրջանակներում քաղաքական իրավունքները պետք է ըստ արժանվույն գնահատվեն նաև այն բանի համար, որ **դրանք անհրաժեշտ և բավարար պայման են պոլիարխիայի ինստիտուտների գործունեության համար**: Ահա թե ինչու Ռ. Դալը պնդում է, որ քաղաքական կյանքում համակարգված իրավունքի ներդրումը պետք է գնահատել որպես ընդհանրապես պոլիարխիայի, ինչպես նաև նրա կողմից ժողովրդավարական գործընթացներում ազատություն և հավասարություն հաստատելու անուրանալի փաստ: Հստակեցնելով վերլուծական այդ մոտեցումը՝ նա գրում է, որ եթե ընդդիմադիր քաղաքական կուսակցություն կազմակերպելու իրավունքը կարելի է որակել որպես պոլիարխիայի գործառնության անհրաժեշտ պայման, ապա նույն տրամաբանությամբ կամքի ազատ դրսևորման իրավունքը պետք է որակել որպես անձի (անհատական) ազատության կարևոր գործոն: Ռ. Դալը նաև պնդում է, որ պոլիարխիան կարելի է բնութագրել բազմաթիվ այլ պարամետրերով ևս, բայց նաև պարզաբանում է, որ պոլիարխիայի էությունը բնութագրող վերը նշված նկարագրական հինգ ձևաչափերը ոչ միայն չեն հակասում, այլև փոխադարձաբար լրացնում են մեկը մյուսին: Դրանք մատնանշում և բացահայտում են միայն քաղաքական ինստիտուտների գործառնության տարբեր տեսանկյունները և հետևանքները, որի հիման վրա պոլիարխիական քաղաքական վարչակարգերը տարբերվում են քաղաքական այլ համակարգերից¹⁷:

Հարկ է անդրադառնալ նաև պոլիարխիայի Ռ. Դալի հայեցակարգի էությունն արտացոլող ևս մեկ առանձնահատկության: Փաստերը վկայում են, որ մոնիստական (քաղաք-պետությունների) սահմանափակ ժողովրդավարության հաղթահարման և իրավական (ազգ-պետության) ժողովրդավարության արմատավորման գործում պոլիարխիան բնորոշող քաղաքական ինստիտուտների և դրանց գործառնական հատկանիշների մասին առաջադրված հայեցակարգային ըմբռնումներն առաջադրելով՝ վերլուծաբանը դրանք դիտարկում և արժևորում է քաղաքական կյանքին բնորոշ դիմամիզմի և փոփոխության համատեքստում: Բնագրային վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ քաղաքագետն այդ գործընթացում առանձնահատուկ կարևորություն է վերագրում նաև պոլիարխիայի **հեռանկարային փոփոխությունների** վերլուծությանը: Հեղինակային այդ մոտեցումը բացատրվում է նրանով, որ պոլիարխիայի ձևավորումը և զարգացումը առաջին հերթին իրենով նշանավորում է ժողովրդավարական ինստիտուտների գործառնական նոր բավանդակություն, որի հիմքում ընկած է քաղաքական բազ-

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 617:

¹⁷ Տե՛ս նույն տեղում:

մակարծության ըմբռնումը, ինչը Ռ. Դալը համարում է ժողովրդավարության օրգանական, անհրաժեշտ և ցանկալի տեսանկյուն: Տեսաբանը նաև հավելում է, որ այդ ամենն իրենցով պայմանավորում են «ժողովրդավարության մասին դասական պատկերացումների» և «գործնական ժողովրդավարության» տարբերությունները:

Արժեքային այդ մոտեցումը, ինչպես նաև պոլիարխիայի և քաղաքական բազմակարծության օրգանական կապը հիմնավորելու միտումով Ռ. Դալը հետադարձ հայացք է նետում ժողովրդավարության զարգացման պատմությանը: Նա հակադրվում է տիրապետող այն տեսակետին, թե «ժողովրդավարության կատարյալ տարածությունը քաղաք-պետության տիպի փոքրիկ և կոմպակտ միությունն է»՝ իրեն բնորոշ ռասայական, ազգային, կրոնական, լեզվական հոմոգեն կառույցներով: Դրա հիման վրա քաղաքագետը ցույց է տալիս, որ պոլիարխիայի և ժողովրդավարության աստիճանական արմատավորման արդյունքում այդ ըմբռնումները փոխարինվել են այն համոզմամբ, որ «առանց գործառնական մասնագիտացման» անհնարին է օբյեկտիվորեն գնահատել քաղաքական և քաղաքացիական կառույցների իսկությունը: Մատնանշելով այդ պնդման հիմնարար պատճառներից մեկը՝ Ռ. Դալը գրում է, որ իրական քաղաքական տարածության մեջ գործնականում **բացարձակ միաստեռություն** չի հանդիպում, քանի որ ազգ-պետության, առավել ևս պոլիարխիայի շրջանակներում բոլորը չէ, որ խոսում են նույն լեզվով, դավանում միևնույն աստվածներին և այլն: Եվ եթե քաղաքական տարածության միաստեռության պատկերացումը վերլուծական նպատակով թույլատրելի է տեսության մեջ, ապա պրակտիկ քաղաքական կյանքում նման իրավիճակի առկայություն գործնականում բացառվում է: Պատճառն ըստ Ռ. Դալի այն է, որ ընդհանրություններից զատ քաղաքական կյանքն աչքի է ընկնում նաև ընդգծված տարբերություններով: Այլ կերպ ասած՝ քաղաքական ցանկացած տարածության մեջ միշտ էլ կարելի է առանձնացնել որոշակի հատկանիշով օժտված տարբերություններ, ինչը փաստվում է նաև այն իրողությամբ, որ ժողովրդավարական երկրներում, անգամ ամենակատարյալներում առկա են կոնֆլիկտային իրավիճակներ, և որ այդ ամենի հաշվարկով էլ իրական ժողովրդավարական երկրներում նախատեսվում և սահմանադրորեն կարգավորվում են կոնֆլիկտածին բոլոր իրավիճակները: Դա է պատճառը նաև, որ կայացած ժողովրդավարությունը պաշտպանում է «ընդհանուր բարիքի» գաղափարը և դրա հիման վրա ոչ միայն ձգտում է խուսափել հավանական, անգամ ենթադրվող տարածայնություններից, այլև ստեղծում է որոշակի արժեհամակարգ, պրակտիկ կյանքում ներդնում քաղաքական մշակույթի համակարգ և արմատավորում է ազատությունների, գաղափարախոսության և իրավունքի այնպիսի դաշտ, որն ունակ է քաղաքացիներին տանել դեպի ընդհանուր շահերի գիտակցում և հնարավոր բախումներից հրաժարում: Ի մի բերելով այդ ամենը՝ քաղաքագետն անդրադառնում է պոլիարխիայի լեգիտիմության և քաղաքական բազմակարծության հիմնահարցերի վերլուծական արժևորմանը:

Ժողովրդավարական քաղաքական տարածությունների զարգացումների համակարգված վերլուծությամբ Ռ. Դալը հանգում է այն հետևությանը, որ «բազմակարծության տեսությունը», անցնելով կայացման և արմատական փոփոխությունների փուլերով, շատ անգամ իր համակարգ է ներառում նաև «տարօրինակ

գաղափարներ»՝ թշնամական քննադատական մեկնություններ, երբեմն անգամ «միանգամայն բանական և կասկածելի գաղափարների խառնուրդ»¹⁸: Ահա թե ինչու «կազմակերպված բազմակարծությունը» նա արժևորում է «չափավոր ընթացքի» մեջ, որն էլ բնորոշում է որպես «կազմակերպված բազմակարծության լեգիտիմություն»: Այդ դիրքերից էլ վերլուծաբանը պոլիարխիայի հետ «կազմակերպված բազմակարծության» և հատկապես վերջինիս լեգիտիմության կապը բացահայտում է քաղաք-պետությունից (մոնիստական ժողովրդավարություն)՝ ազգ-պետության (բազմակարծության ժողովրդավարություն) տեղաշարժերի համատեքստում: Անցման այդ փուլի քաղաքական պրակտիկայի համեմատական վերլուծությունը տեսաբանին բերում է այն հետևության, որ պոլիարխիան և կազմակերպված բազմակարծությունը, հանդես գալով քաղաքական միասնության մեջ, ոչ միայն անխուսափելիորեն լրացնում են մեկը մյուսին, այլև՝ ինչպես հասարակական-տնտեսական, այնպես էլ քաղաքական կյանքում լեգիտիմություն են ձեռք բերում:

Փաստելով **պոլիարխիայի և բազմակարծության** կապը՝ Ռ. Դալը վերջինիս էությունը բացահայտում է հասարակական և քաղաքական կառույցների և ասոցիացիաների օրինակով: Այդ մոտեցումը նա բացատրում է նրանով, որ քննարկվող երկու երևույթներն էլ արտահայտում են ոչ միայն կորպորատիվ, այլև հասարակական և քաղաքական շահեր, այսինքն հանդիսանում են **ներկայացուցչական կառույցներ**: Եվ չնայած այդ ակնհայտ փաստին՝ նա պնդում է նաև, որ նշված ասոցիացիաների ներկայացուցչությունը ևս հարաբերական է այն պարզ պատճառով, որ դրանք կարող են արտաբերել միայն սեփական կորպորատիվ շահերը (սահմանափակ ներկայացուցչություն), որով մրցակցային պայքարում կարող են ոտնահարել այլոց իրավունքները և արգելակող դեր կատարել: Ինչպես նաև, հասարակական և քաղաքական անկախ այդ կառույցները կարող են ճնշվել վարչակարգի կողմից: Ըստ վերլուծաբանի այդ պարագայում ակնհայտ է, որ դրանք կարող են ճնշվել բացառապես պոլիարխիայի ինստիտուտները ճնշելու դեպքում: Եվ ինչպես պատմությունն է ցույց տալիս, նույնիսկ նման իրավիճակներում իսպառ բացառվում են այն դեպքերը, երբ պոլիարխիան ու բազմակարծությունը կարող են հակադրվել միմյանց: **Չակառակը, նրանք միշտ շարժվում են ձեռք-ձեռքի:**

Ռ. Դալի հայեցակարգում մեծ տեղ է հատկացվում նաև այն տեսակետի հիմնավորմանը, որ կազմակերպված բազմակարծությունը երբեմն կարող է բավարար պայման չլինել պոլիարխիայի համար: Քաղաքագետն այդ տեսակետը փաստում է նրանով, որ **պոլիարխիայի ինստիտուտներն ինքնաբավ են**, և իրենք կարող են անհրաժեշտ պայման դառնալ հարաբերական անկախությամբ օժտված հասարակական-քաղաքական կազմակերպությունների և ասոցիացիաների գործունեության համար: Այդ հատկանիշների շնորհիվ է, որ նշված կառույցները ազդեցիկ դեր են կատարում կոնկրետ երկրի քաղաքական կյանքում: Ընդ որում, քաղաքագետը համոզված պնդում է, որ հարաբերականորեն ինքնավար քաղաքական այդ կառույցներն անհրաժեշտ դերակատարություն ունեն հատկապես խոշորամասշտաբ ժողովրդավարական պրակտիկայի համար: Դրա

¹⁸ Նույն տեղում, էջ 619:

հիման վրա տեսաբանը հանգում է ընդհանրացնող այն հետևությանը, որ պոլի-արխիայի համակարգում ձևավորված իրավական դաշտն օրենսդրորեն ապահովում և իրավական տեսք է տալիս նաև կազմակերպված բազմակարծության կառուցվածքային տարրերի գոյությանն ու գործառնությանը:

Քաղաքագետը նաև հիմնավորում է այն մոտեցումը, որ բազմակարծությունն ու պոլիարխիան ոչ մի պարագայում չպետք է դիտարկել որպես պարզ երևույթներ: Այդ եզրահանգումը նա փաստում է նրանով, որ այդ պարագայում «Առաջին հերթին, խորապես մոլորություն կլինեի ենթադրել, որ ժողովրդավարական բոլոր երկրներում կազմակերպչական կյանքը համընկնում է, ... երկրորդ, եթե պոլիարխիայի համակարգում բազմակարծությունը անհրաժեշտ է, անխուսափելի և ցանկալի, այդ ամենով հանդերձ, այն կարող է հանգեցնել նաև անցանկալի երևույթների: Եթե ասենք որոշ շահեր իրենց ռեսուրսներով ակկունուլացվում են կազմակերպության տեսքով, իսկ մյուսները ոչ, ապա այն կծառայի քաղաքացիների միջև անհավասարության հաստատմանը, իսկ այդ անհավասարության որոշ տարատեսակներ կարող են նաև անարդարացի լինել»¹⁹:

«Պոլիարխիայի և բազմակարծության միջև առկա կապերն առավել իմաստավորելու համար, հնարավոր է, պետք է առաջադրել նաև պոլիարխիայի էության վեցերորդ մեկնաբանությունը»,- գրում է Ռ. Դալը և պարզաբանում. «Պոլիարխիան կարելի է դիտարկել նաև որպես այնպիսի քաղաքական վարչակարգի տեսակ, որը համապատասխանում է ազգ-պետությունների կառավարմանը, որում հասարակական գործերից վեր կանգնած իշխանությունը և հեղինակությունը բաշխված են բազմակարծության՝ կազմակերպությունների և ասոցիացիաների բազմության միջև, որոնք բավականին ինքնավար են ոչ միայն մեկը մյուսի նկատմամբ, այլև բազմաթիվ դեպքերում պետության կառավարչական գործունեության նկատմամբ»²⁰: Այդ տեսանկյունից քաղաքագետը մատնանշում է նաև պոլիարխիայի և մոնիստական դասական դեմոկրատիայի էական մեկ այլ տարբերություն և, որի էությունը ձևակերպում է «... հասարակության քաղաքական կյանքում և հասարակական գործերի լուծման գործում ինքնավար կազմակերպությունների ականավոր դերով, իշխանությամբ և լեգիտիմությամբ»²¹: Նշված ընդհանրությունների և տարբերությունների վերլուծությամբ նա մատնանշում է նաև պոլիարխիայի և ավտորիտար վարչակարգերի արմատական մի շարք տարբերություններ: Այդ շարքում Ռ. Դալը հիշատակում է գործառնական այնպիսի տարբերություններ, ինչպիսիք են՝ «1) պոլիարխիայի ինստիտուտները, որոնք ամբողջությամբ առկա չեն ոչ մի ավտորիտար վարչակարգում և որոնք ազդեցիկ տարածություն են ստեղծում ցանկացած ավտորիտար վարչակարգի կողմից երաշխավորվող ժողովրդավարական գործընթացների համար՝ առանձնացնելով առավել կամ պակաս կարևոր այն ինստիտուտները, որոնք անհրաժեշտ (եթե բավարար չեն) են լայնամասշտաբ ժողովրդավարության համար, 2) կազմակերպված բազմակարծության մասշտաբը, որը մի կողմից պոլիարխիան հստակորեն տարբերում է ավտորիտար մոնիստական՝ այսինքն տո-

¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 623:

²⁰ Նույն տեղում, էջ 626:

²¹ Նույն տեղում:

տալիտար վարչակարգերից, և մյուս կողմից՝ սահմանափակ բազմախոհության ավտորիտար վարչակարգերից, որտեղ գոյություն չունի, օրինակ, ինքնավար քաղաքական կուսակցությունների բազմակարծություն»²²:

Р. А. ДАЛЬ О ПОЛИАРХИИ И ПОЛИТИЧЕСКОМ ПЛЮРАЛИЗМЕ

А. А. Калашян

Статья раскрывает понимание Р. А. Далем полиархии и политического плюрализма.

На основе политологического анализа Р. Даль определяет полиархию в ракурсе последствий "пространственных сдвигов демократии от города-государства к нации-государству, от демократии малого пространства к крупномасштабной демократии". Рассматривая полиархию и организованный плюрализм в качестве специфического типа режима (как продукт демократизации наций-государств, необходимость демократического процесса, как система проверки компетенций и прав и т.д.), теоретик находит, что сущность полиархии теоретиком определяется посредством "семи институтов" (близкое к универсальному избирательное право, право участия, свободные от насилия и принуждения выборы, надежная защита свобод, существование альтернативных и конкурирующих источников информации, свобода создания автономных и разнообразных организаций, относительно высокая зависимость правительства от избирателей и результатов выборов).

R. A. DAHL ON POLYARCHY AND POLITICAL PLURALISM

A. A. Kalashyan

On the basis of political analysis R. Dahl defines polyarchy from the perspective of the consequences "of spatial shifts of democracy from the citystate to nationstate of democracy of small spaces to largescale democracy." Polyarchy and organized pluralism considering as a particular type of treatment (as a product of democratic nationstates, the need of democratic process as a system of inspection for competencies and rights, etc.), the theoretic defines the nature of polyarchy by "the seven institutions" (as close to universal suffrage right, the right to participate as free from violence and coercion elections as a reliable protection of freedoms, the existence of alternative and competing sources of information, freedom of autonomous and diverse organizations, the relatively high dependence of government from voters and election results).

²² Տե՛ս նույն տեղում, էջ 626-627: